## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

### ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

8 փետրվար, 2019 թվականի № 8-Ա

«ՀՈԳԵՎՈՐ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱ ՀԻՄԱՆ ՎՐԱ ԿԱԶՄՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՈՒԴԻՏ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԱՈՒԴԻՏ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ՎՃԱՐՎՈՂ ԳՈՒՄԱՐԻ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ըկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի «ժա» կետի, 84-րդ հոդվածի 1-ին մասին «ժբ» կետի, 92-րդ հոդվածի, «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի և 31-րդ հոդվածի, «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի, «Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կանոնադրության պահանջներով՝ Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Ընկերության 2018 թվականի ֆինանսատնտեսական գործունեության և դրա հիման վրա կազմված ֆինանսական հաշվետվությունների ստուգման նպատակով իրականացնել արտաքին աուդիտ:

2. Ընկերության 2018 թվականի ֆինանսատնտեսական գործունեության և դրա հիման վրա կազմված ֆինանսական հաշվետվությունների ստուգման նպատակով աուդիտ իրականացնող անձ հաստատել Ընկերության կողմից ՀՄՀՀ-ՄԱԾՁԲ-01/19 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում ընտրված մասնակից ճանաչված «Բի-Դի-Օ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությանը:

3. Սույն որոշման 1-ին կետում նշված աուդիտն իրականացնելու նպատակով «Բի-Դի-Օ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության ծառայությունների դիմաց վճարվող գումարի չափ սահմանել 996,000.0 (ինը հարյուր իննսունվեց հազար) Հայաստանի Հանրապետության դրամ (ներառյալ՝ ավելացված արժեքի հարկը):

4. Ընկերության 2018 թվականի ֆինանսատնտեսական գործունեության և դրա հիման վրա կազմված ֆինանսական հաշվետվությունների ստուգման նպատակով «Բի-Դի-Օ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության հետ կնքել աուդիտ իրականացնելու մասին պայմանագիր:

5. Սույն որոշման պահանջների կատարումը հանձնարարել Ընկերության գործադիր տնօրենին:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ռ. ՋԱՂԻՆՅԱՆ

8 փետրվար, 2019 թվականի
ք. Երևան